

210

ՀԱԽ Հ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԶՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1928—29 թ.

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐԿԻ ՄԱՍԻՆ

ՅԵՐԵՎԱՆ

1928 թ.

357.71 (47.925)

24 JUL 2019

Վ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Խ. Ս. Հ. ՄԻՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ԿՈՄԻՏԵՅԻ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ
ԿԻՐԱՐԿՈՒԹՅԱՆ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Խ.Ս.Հ. Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեն
ՎՈՐՈՇՈՒՄ Ե.

1. Այս թվին հաստատված միասնական դյուլտանտական
հարկի կանոնադրությունը գործադրության դնել 1928-29 հար-
կային տարուց:

2. Հանձնարարել Խ.Ս.Հ. Միության Ֆինանսների Ժողովրդ-
դական կոմիտեին ներկայացնել Խ.Ս.Հ. Միության Ժողո-
վրդական կոմիտեների խորհուրդին և հաստատության, իսկ Խ.
Ս. Հ. Միության Ժողովրդական կոմիտեների խորհուրդին՝ մեկ
ամսվա ընթացքում հաստատել Խ.Ս.Հ. Միության Որենսդրու-
թյան այն փոփոխությունները, վերոնր րդխում են հիշյալ կանո-
նադրությունից, և Խ.Ս.Հ. Միության՝ իրենց ուժը կորցնող ո-
րենքների ցանկը:

3. Առաջարկել դաշնակից հանրապետությունների ժողովրդ-
դական կոմիտեների խորհուրդներին մեկ ամսվա ընթացքում հա-
մաձայնեցնել դաշնակից հանրապետությունների որենսդրույթու-
նը հիշյալ կանոնադրության հետ:

Խ.Ս.Հ. Միության Կենտրոնական Գործադիր Կոմիտեի
Նախագահ՝ Ս. Մ. ՄԱՐԿԻՆ

Խ.Ս.Հ. Միության Կենտրոնական Գործադիր
Քարտուղար՝ Ա. Մ. ՄԱՐԿԻՆ

Մոսկվա, 1928 թ. ապրիլի 21-ին.



ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ
ՀԱՏՎԱԾ I
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔԵՐ

1. Միասնական գյուղատնտեսական հարկի յենթակա յե գյուղատնտեսությամբ զբաղվող ամբողջ բնակչությունը, այլև կուլ-լեկտիվ տնտեսությունները (կոմունաները, արտելները և բնիկ-բուլբուլները) ու խորհրդային տնտեսությունները, վորոնք յեկամուտ են ստանում 2-րդ հոգվածում թված աղբյուրներից:

2. Հարկը հաշվվում է գանձվում է ամեն մի առանձին արնտեսությունից, համաձայն այն ընդհանուր յեկամտի, վար նա ստանում է գրամով կամ միլիարդով ստորե հիշված աղբյուրներից՝

- ա) գաշամշակությունից,
- բ) մարգագործությունից,
- գ) ամեն տեսակի անասնապահությունից,
- դ) գյուղատնտեսության հատուկ ճյուղերից (բանջարաբուծությունից, խաղողագործությունից, պարսիզպանությունից, ծխախոտագործությունից, մեղվաբուծությունից և այլն) .
- ե) վոչ գյուղատնտեսական յեկամուտներից (աշխատավարձից, անասնագործական-արհեստավորական և այլ յեկամուտներից) .

զ) իրեն քարչի ու յո՛ւ՝ անհատական տնտեսություններում ողտագործվող սեփական արակտորներից:

3. Գյուղատնտեսական միասնական հարկին յենթակա յեկամուտների աղբյուրները յենթակա յեն հանրապետական և տեղամուտների աղբյուրները յենթակա յեն հանրապետական և տեղամուտների վորեն այլ հարկի, բացառությամբ Ուզբեկստանի Խ.Ս.Հ. —ում, Թուրքմենստանի Խ.Ս.Հ. —ում, Կազախստանի Խնքնավար Խ.Ս.Հ. —ում և Կիրգիզիայի Խնքնավար Խ.Ս.Հ. —ում սահմանված ջրային տուրքից (Խ.Ս.Հ. Միության Կ.Գ.Կ. և Ժ.Կ.Պ. 1927 թ. հունիսի 13-ի վորոշումը—«Խ.Ս.Հ. Միության Որենքների Ժողովածու» 1927 թ. № 41, հոդ. 418):

Այն հողամասերից, վորոնց յեկամուտները յենթակա յեն միասնական գյուղատնտեսական հարկի, ինչպես նաև յենքերի բռնած այն հողամասերից, վորոնք անմիջականորեն կապ ունեն գյուղատնտեսական ողտագործման հետ, ունտա յի գանձվում:

Միասնական գյուղատնտեսական հարկի յենթակա տնտեսությունների կազմի մեջ մտնող յենքերն աղտավում են յենքերից գանձվող տեղական հարկից:

4. Քաղաքի սահմաններում գտնվող հողամասերի վրա գյուղատնտեսությամբ զբաղվող անձինք, անկախ նրանց մշտական բնակավայրից, իրենց յեկամուտներից պետք է վճարեն կամ պետական յեկամուտահարկ, կամ միասնական գյուղատնտեսական հարկ:

Այն քաղաքային վայրերի ցուցակները, վորտեղ հիշված անձինք բոտ նրանց գյուղատնտեսական և վոչ-գյուղատնտեսական յեկամուտների կամ միայն գյուղատնտեսական յեկամուտների պետք է յենթարկվեն միասնական գյուղատնտեսական հարկի, կամ այդ անձանց՝ միասնական գյուղահարկի յենթակա կատեգորիաները—սահմանում են նահանգական և շրջանային գործադիր կոմիտեները:

Շանքուրյուս.—Այս կանոնադրության 3-րդ և հետագա հոգվածներով նախատեսված նահանգական և շրջանային գործադիր կոմիտեների իրավունքները և պարտականությունները առաձվում են, բացառությամբ համապատասխան հոգվածներով՝ հատուկ հիշատակված դեպքերի, նաև նահանգական բաժանում չունեցող ինքնավար հանրապետությունների ժողովրդական կոմիտեների խորհուրդների և ինքնավար մարզերի գործադիր կոմիտեների վրա: ԱՍՖՈՀ-ում վերահիշյալ իրավունքներն ու պարտականությունները իրագործում են Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի խորհրդային սոցիալիստական հանրապետությունների ժողովրդական կոմիտեների խորհուրդները: Այս կանոնադրության մեջ շրջանային գործադիր կոմիտեներ ասելով հասկացվում են շրջանացման յենթարկված վայրերի գործադիր կոմիտեները:

5. Քաղաքում ապրող և քաղաքի սահմաններից դուրս գտնվող հողերի վրա գյուղատնտեսությամբ զբաղվող անձինք յենթակա յեն միասնական գյուղատնտեսական հարկի և յեն աղտավում քաղաքի բնակչության վրա դրվող հարկերից, բացառությամբ 3-րդ հոգվածի յերկրորդ և յերրորդ մասերում թված հարկերից:

6. Գյուղական վայրերում արհեստներով, տնայնագործությամբ և նման աշխատանքներով զբաղվող անձինք, յեթե զբաղվում են նաև գյուղատնտեսությամբ, թեկուզ նրանք աշխատելու լինեն միանձնաբար, կամ իրենց ընտանիքի անդամների ոգնությունը և կամ ունենան յերեք հոգուց վուչ ավելի վարձու բանվոր, անկախ հատուկ սարքավորված արհեստանոց ունենալուց և մեքենայական շարժիչներ գործադրելուց, չեն յենթարկվում պետական արհեստահարկի և յեկամտահարկի: Արհեստներից, տնայնագործությունից և նման զբաղմունքներից (մասնավորապես՝ ձկնորսությունից և վորսորդությունից—այն շրջաններում, վորտեղ այդ զբաղմունքները արդյունաբերական զարգացած են) այդ անձանց ստացած յեկամտաները մոտցվում են նրանց տնտեսության՝ միասնական գյուղահարկի յենթակա յեկամտի մեջ:

7. Միասնական գյուղատնտեսական հարկի յենթակա չեն և պետք և հարկվեն պետական արհեստահարկի և յեկամտահարկի վերաբերյալ որոշումների համաձայն՝

ա) առևտուրը,

բ) 6-րդ հոդվածում մասնանշված չափերից ավելի խոշոր արդյունաբերական ձեռնարկությունները,

զ) մասնավոր անձանց պատկանող ապրանքային ադաքները, վարոնք նախատեսված են պետական արհեստահարկի բացառությունների և արտոնությունների ցանկի 24-րդ հոդվածով (Խ.Ս.Հ. Միություն Որենքների Ժողովածու—1928 թ. № 1. հոդ. 4) և առեկառուցողի ձեթ արտադրող—ձիթագործական արդյունաբերություն ձեռնարկությունները, վորոնք նախատեսված են նույն ցանկի 28-րդ հոդվածով:

8. Այն անձինք, վորոնց աշխատավարձի վուրեկ մասն արդեն յենթարկված և գյուղատնտեսական միասնական հարկի, ազատվում են աշխատավարձից դանձվող պետական յեկամտահարկից:

9. Միասնական գյուղատնտեսական հարկի չի յենթարկվում և պատշաճ զեպքերում հարկվում և պետական յեկամտահարկով այն աշխատավարձը, վոր ստացվում է՝

1. ա) պահահարկի կարգով կատարված աշխատանքի համար,

բ) գյուղատնտեսության մեջ բառարակի կատարած աշխատանքի համար,

զ) ընտրովի ստորին խորհրդային պաշտոններ (վոլոստային և ոսայոնական գործադիր կոմիտեների և գյուղխորհուրդների անդամներ) վարելու համար,

դ) Փոխադարձ ոգնություն գյուղացիական ընկերություններին կոմիտեներում և նրանց համապատասխանող կազմակերպություններում, այլև գյուղական ստորին կոոպերատիվներում վարած ընտրովի պաշտոնների համար,

յե) գյուղական, դավառակային բժշկական և անասնաբուժական անձնակազմի (բժիշկների, ատամնաբույժների, բուժակների, մանկաբարձուհիների և այլն), դավառակային գյուղատնտեսների և նրանց ոգնականների, դավառակային հողաշինարարների և մեքլորատորների, անտառապետների, նրանց ոգնականների, անտառապահների և անտառային պահակների, գյուղական ժողովրդական ուսուցիչների, ժողովրդական դատավորների, գյուղխորհուրդների քարտուղարների, գյուղական նամակատարների, գյուղական միլիցիայի, վոլոստների և ոսայոնների վիճակագիրների, գյուղական հիվանդանոցների, դպրոցների, վոլոստների ու ոսայոնների գործադիր կոմիտեների և գյուղխորհուրդների տեխնիկական սպասարկու անձնակազմի աշխատանքի համար,

զ) գրական և կուլտուրալ-տեսլորական աշխատանքների (գյուղթղթակից, խրճիթավար և այլն) համար.

2. 52-րդ հոդվածի «ա», «զ» կետերում հիշված ղեկավարական ծառայողների բավարարության բոլոր տեսակները.

3. պետական հաստատություններից ստացվող կենսաթոշակները:

10. Նահանգական և շրջանային գործադիր կոմիտեներին իրավունք և վերապահվում՝

ա) իրենց յենթակա ամբողջ տերիտորիայի կամ նրա մի մասի վրա միասնական գյուղատնտեսական հարկից ազատելու վուչ-գյուղատնտեսական յեկամտաները այն պայմանով, վոր հարկ յեղած զեպքում այդ յեկամտաները հարկվեն պետական արհեստահարկի և յեկամտահարկի որոշումների կարգով,

բ) թույլ տալ վոլոստային և շրջանային հարկային հանձնաժողովներին հարկից ազատել սուսնձին չքավոր տնտեսությունների վուչ-գյուղատնտեսական յեկամտաները:

11. Արդելվում է միասնական գյուղատնտեսական հարկի վրա վուրեկ հավելում անել, ինչպես նաև միասնական գյուղատնտեսական հարկի հետ միասին մի հարկաթերթով ուրիշ հարկեր և տուրքեր դանձել:

12. Միասնական գյուղատնտեսական հարկի հարկային տասրին սահմանել մայիսի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ:

ՀԱՏՎԱԾ II

ՀԱՐԿԻ ՅԵՆԹԱԿԱ ՅԵԿԱՍՈՒՏԸ ՀԱՇՎԵԼԸ

13. Դաշտամշակութայն յեկամուտը հաշվվում է տնտեսութայն մեջ փաստորեն ցանոթած հողի տարածութայն համեմատ (ըստ ցանրի) կամ տնտեսութայն մեջ յեղած ամբողջ վարելահողի տարածութայն համեմատ (ըստ վարելահողի) : Դաշնակից հանրապետութայնների ժողովրդական կոմիտեներին խորհուրդները կամ, նրանց հանձնարարությամբ, ինքնավար հանրապետութայնների ժողովրդական կոմիտեներին խորհուրդները, յերկրային, մարդային, նահանգական և շրջանային գործադիր կոմիտեները անդական սրբամաններին համեմատ սահմանում են, թե վոր վայրերում դաշտամշակութայն յեկամուտը հաշվվում է ըստ ցանրի և վոր վայրերում՝ ըստ վարելահողի :

Ծանոթություն.— Կոլլեկտիվ և խորհրդային տնտեսութայններում դաշտամշակութայն յեկամուտն ամենուրեք հաշվվում է ըստ ցանրի տարածութայն :

14. Այն վայրերում, վորտեղ դաշտամշակութայն յեկամուտը վորոշվում է ըստ ցանրի, հաշվառման յենթակա հողի տարածութայն մեջ և մասում փաստորեն ցանոթ հողը, նրա մեջ հաշվելով նաև բանջարանոցների, պարտեզների և հատուկ մշակութայնների բուսած տարածութայնը, յեթե նրանց յեկամուտը հաշվի չի առնվում 17-րդ և 21-րդ հոդվ. կարգով : Այն վայրերում, վորտեղ դաշտամշակութայն յեկամուտը վորոշվում է ըստ վարելահողի, հաշվառման յենթակա հողի տարածութայն մեջ բացի դրանից մըտնում են նաև խամերը, հարոսները, խողանները, ինչպես և նախադասակները, մերձադարակային և շենքերից ու բակից ազատ ազարակային հոդերը :

15. Այն վայրերում, վորտեղ դաշտամշակութայն վարվում է խողանների սխտեմով, մարդադործութայն յեկամուտը հաշվելիս հաշվառման յենթակա յեն տնտեսութայն կողմից մշտապես սղտադործվող խոտհարքները, իսկ մնացած վայրերում—տնտեսութայն մեջ գտնվող բոլոր խոտհարքները, այն և՛ վողովակները, չվողովակները, հարթավայրերի վրա գտնվողները, անջրդինները և անստատայինները :

16. Անասնապահութայն յեկամուտը հաշվելիս հաշվառման յենթակա յեն.—

ա) 4 տարեկանից մեծ ձիերը, յեղները, դոմեշները, եչերը, ջորիները, ուղտերը,

բ) 3 տարեկանց մեծ ցուլերը,

գ) կովերը առաջին անգամ ծնելուց հետո և 3 տարեկանից մեծ յերինջները,

դ) ձմեռած վոչիտարներն ու ալծերը,

ե) 6 ամսականից մեծ խոզերը :

Ծանոթություն Անասնոնների տարիքը վորոշվում է առհարկման տարվա մայիսի 1-ը :

17. Բանջարարութայն, խաղողագործութայն, պարտիզպանութայն և ծխախոտագործութայն յեկամուտը հաշվելիս հաշվառման և յենթակա վում տնտեսութայն մեջ այդ մշակութայնների բուսած տարածութայնը, մեղվարութայն յեկամուտը հաշվելիս հաշվառման յենթակա յեն տնտեսութայն մեջ յեղած փեթակների քանակութայնը (շրջանակավոր և կթոցաձև) :

Ծանոթություն.— Բանջարարութայն ու պարտիզպանութայն, այլև, բացի այս հոդվածում թվածներից, հարկի յենթակա մյուս հատուկ ճյուղերի վերաբերմամբ նահանգական և շրջանային գործադիր կոմիտեներին իրավունք և վերապահվում, դաշնակից հանրապետութայնների ժողովրդախորհրդների զիրեկտիվ ցուցմունքների համաձայն, սահմանելու միևնույն, վորք յենթակա չեն հարկման յեկամտարերութայն հատուկ նորմաներով :

Այն տնտեսութայններում, վորտեղ տվյալ հատուկ ճյուղը սահմանված միևնույնից զերապանցում է, հատուկ նորմաներով հարկման յենթակա յեն տնտեսութայն մեջ յենդած հատուկ ճյուղի ամբողջ յեկամուտը :

18. Առանձին տնտեսութայնների դաշտամշակութայն, մարգագործութայն, անասնապահութայն, բանջարարութայն, պարտիզպանութայն, խաղողագործութայն, ծխախոտագործութայն և մեղվարութայն հարկի յենթակա յեկամտի գումարը, բացառությամբ 28-րդ հոդվածում մատնանշված տնտեսութայնների, վորոշվում է համաձայն՝

ա) տնտեսութայն հողի (ցանրի կամ վարելահողի), խոտհարքի ու վերը հիշված հատուկ մշակութայնների զեւթատիներին, անասնոններին ու փեթակների քանակութայն,

բ) տվյալ վարչատերիտորյալ միավորի համար սահմանված յեկամտային համապատասխան նորմաների,

դ) նորմաներով հաշված դյուղատնտեսական յեկամտի վրա ավելացող տոկոսային հավելումների, վորոնք նախատեսված են 27-րդ հոդվածով:

19. Դաշնակից հանրապետությունների համար սահմանվում են ստորև թված աղբյուրների յեկամտի հետևյալ միջին նորմաները (տուրքիներով).—

ԴԱՇՆԱԿԻՑ ՀԱՆՐԱՊԵՏՈՒ- ԹՅՈՒՆՆԵՐ	ՄԵԿ ԴԵՅԱՅՍԻՆ ՀՈՂԻ ՅԵԿԱՍՏԱՄԵՐՈՒ- ԹՅՈՒՆԸ						ՄԵԿ ԳԼՈՒԽ ԱՆԱՄՈՒԽ ՅԵԿԱՍՏԱՄԵՐՈՒԹՅՈՒՆԸ						1 ՓԵՏԱԿ ՅԵԿԱՍՏ.			
	Ց ա ն բ ի	Ջրովի ցանքի	Վարելահողի	Պտտհարթի	Բանջարանոցի և բոստանի	Խաղողի այգու	Պարտեզի	Ծխախոտի ցանքի	Ջրու. ուղաի, ջուրու	Խոշոր յեղջ. ա- նասունի, բացի յեղներից	Յ և զ ի	Ե շ ի	Վոշիարի, այծի	Խ ս զ ի	Շրջանակավոր	Կթոցածև
Ռ. Խ. Ֆ. Ս. Հ.	40	—	32,5	16	150	230	140	200	20	18	11	5	2	5	5	2
Ուկր. Խ. Ս. Հ.	52	—	36,5	26	150	220	140	200	26	21	20	5	1,6	7	5	2
Բ. Խ. Ս. Հ.	18	—	33	18	190	—	170	—	22	19	13	—	1,2	7	5	2
Ա. Խ. Ֆ. Ս. Հ.	45	—	30	15	150	220	180	250	15	13	13	5	2,5	5	5	2
Ուկր. Խ. Ս. Հ.	92	—	—	250	330	240	310	—	15	15	13	5	3	5	5	2
Թուրքմ. ԽՍՀ	87	—	—	270	400	240	—	—	15	13	12	5	3	5	5	2

Մանրագրում. — Ուղբեկատանի Խ. Ս. Հ., Թուրքմենս-
տանի Խ. Ս. Հ. և Կիրգիզիայի ինքնավար Խ. Ս. Հ. անջրդի
ցանքերի յեկամտաբերության նորմաները սահմանվում են
ըստ պատկանելույն Ուղբեկատանի Խ. Ս. Հ., Թուրքմենստա-
նի Խ. Ս. Հ. և Ռ. Խ. Ֆ. Ս. Հ. ժողովրդական կոմիտաների
խորհուրդների կողմից:

20. Դաշնակից հանրապետությունների ժողովրդական կոմի-
տաների խորհուրդները սահմանում են 19-րդ հոդվածում մատ-
նանշված աղբյուրների յեկամտաբերության նորմաները նահանգ-
ների և շրջանների համար: Իսկ նահանգական և շրջանային գործա-
դիր կոմիտաներին իրավունք է վերադասվում դավառական (կամ
նրանց համադատաանող) և ուսյոնական գործադիր կոմիտաների
հետ համաձայնեցնելով, առանձին վարչատերիտորյալ միավորնե-
րի համար դաշնակից հանրապետությունների ժողովրդական կո-
միտաների խորհուրդների սահմանած յեկամտաբերության նոր-
մաները փոխել. նահանգական և շրջանային գործադիր կոմիտանե-
րը սահմանում են յեկամտաբերության տարբեր նորմաներ պանա-
զան տեսակի խոտհարքների համար (վողողվաղ, անջրդի և ույն)
և կարող են սահմանել յեկամտաբերության տարբեր նորմաներ դա-
նաղան տեսակի բանջարանոցների, բոստանների և պարտեզների
համար: Այս դեպքում չպետք է փոփոխվի հիշված աղբյուրներից
յուրաքանչյուրից ստացվող յեկամտի այն ընդհանուր գումարը,
վորը դաշնակից հանրապետության մեջ, նահանգում և շրջանում
յենթակա յե հարկման, համաձայն այն նորմաների, վորոնք սահ-
մանված են տվյալ հանրապետության, նահանգի և շրջանի հա-
մար:

Մանրագրում. — Կազակատանի ինքնավար Խորհրդային
Սոցիալիստական Հանրապետ. և ՌՖՍՀ յերկրների (մար-
դերի) համար յեկամտաբերության նորմաները սահմանում
և ՌՍՖՍՀ ժողովրդական կոմիտա. Խորհուրդը, իսկ նրանց
կողմի մեջ մանող նահանգների և շրջանների համար—Կա-
զակատանի ինքնավար Խորհրդային Սոց. Հանրապետության
ժողովրդական կոմիտ. Խորհուրդը, յերկրային և մարդային
գործադիր կոմիտաները ըստ պատկանելույն, պահպանելով
այն կարգը, ըստ վորի ամեն մեկ առանձին աղբյուրի հարկի
յենթակա յեկամտի ընդհանուր գումարը մնում է անփոփոխ:

27. Միասնական գյուղատնտեսական հարկի յենթարկվող յեկամուրը գյուղատնտեսութեան իսկական յեկամտին մոտեցնելու նորոտակով անհատական տնտեսութեաններին համար նրանց՝ բոլոր աղբյուրներէն ստացվող, հարկման յենթակա յեկամտի ընդհանուր գումարին համեմատ—սահմանվում են տոկոսային հալեւելմներ գյուղատնտեսութեանից (այսինքն՝ դաշտամշակութեանից, մարգագործութեանից, անասնապահութեանից և հատուկ ճյուղերից) ստացվող նրանց յեկամտի՝ նորմաներով հաշված գումարի վրա:

Իաշնակից հանրապետութեաններին ժողովո՞ւթո՞ւրհները կամ նրանց հանձնարարութեամբ՝ յերկրային (մարգային) գործադիր կոմիտեները յուրաքանչյուր նահանգի և շրջանի համար սահմանում են —

ա) առանձին տնտեսութեաններին հարկման յենթակա ընդհանուր (բոլոր աղբյուրներէն) յեկամտի այն չափերը, վորոնք անհրաժեշտ են տոկոսային հալելումները կատարելու համար: Այդ չափերը 400 ուրբուց ալեւելի ցածր չափեր և լինեն ՌՄՖՍՀ և Ուկր. ԽՍՀ, 350 ուրբուց — ԲՍՀ, Ուկր. ԽՍՀ և Թուրքի. ԽՍՀ և 300 ուրբուց — ԱՖՍՀ համար:

բ) հալելումների չափեր—տնտեսութեան հարկի յենթարկվող ամբողջ յեկամտի չափի համեմատ, բայց գյուղատնտեսութեանից ստացվող՝ նորմաներով հաշված յեկամտի 5 տոկոսից վոչ պակաս և 25 տոկոսից վոչ ալեւելի:

Ծանօթութեամբ. — Իաշնակից հանրապետութեաններին ժողովո՞ւթո՞ւրհներին իրավունք և վերապահում այս հոդվածից բացառութեաններ սահմանելու այն տնտեսութեաններին համար, վորոնց հարկման յենթակա յեկամտի մեկ շնչին բնկնող գումարը չի գերազանցում 50 ուրբուց, այլև այն տնտեսութեաններին համար, վորոնք սեփական քարչի ույծ և ինվենտար չունենալու պատճառով վարձում են այդ ույծի ու ինվենտարը:

28. Այն անհատական տնտեսութեաններին նկատմամբ, վորոնք առանձնապէս աչքի յեն բնկնում ավայր վայրի ընդհանուր գյուղացիական մասսայի մեջ իրենց յեկամտաբերութեամբ և միեւնոյն ժամանակ իրենց յեկամուտների վոչ—աշխատավորական բնույթով, վորտաային և ապոնական հարկային հանձնագործները հաշվում են այդ տնտեսութեաններին բոլոր աղբյուրներէն ստացվող հարկի

յենթարկվող յեկամտի գումարը վոչ թե նորմաներով, այլ ունեցած ընդհանուր տեղեկութեաններին հիման վրա, այդ աղբյուրների իսկական յեկամտաբերութեան համեմատ:

Այս հոդվածի կիրարկման կարգը սահմանվում և ԽՍՀ Միութեան Ֆինոգոլիոմտի հատուկ կանոններով:

ՀԱՏՎԱԾ III

ՀԱՐԿԸ ՀԱՇՎԵԼԸ

29. Ամբողջ Խ. Ս. Հ. Միութեանում (բացառութեամբ Ուկրաինայի Խ. Ս. Հ. և Թուրքիայի Խ. Ս. Հ.) ամեն մի տնտեսական տնտեսութեան հարկի չափը վորոշվում և համաձայն այն գումարի, վոր կազմում և տնտեսութեան ընդհանուր յեկամուտը, դուրս յեկած 20—ական ուրբլի տնտեսութեան յուրաքանչյուր շնչի համար, ընդ վորում՝

Յուրաքանչյուր
ուրբուց

Տնտեսութեան յեկամտի մնացորդի առաջին 25 ուրբուց	զանձվում և	4 կոպեկ
Տնտեսութեան յեկամտի մնացորդի 25 ուրբուց վեր մինչև 100 ուրբուց ալեւելից զանձվում և	7 »	
Տնտեսութեան յեկամտի մնացորդի 100 ուրբուց վեր մինչև 150 ուրբուց ալեւելից զանձվում և	10 »	
Տնտեսութեան յեկամտի մնացորդի 150 ուրբուց վեր մինչև 200 ուրբուց ալեւելից զանձվում և	15 »	
Տնտեսութեան յեկամտի մնացորդի 200 ուրբուց վեր մինչև 250 ուրբուց ալեւելից զանձվում և	20 »	
Տնտեսութեան յեկամտի մնացորդի 250 ուրբուց վեր մինչև 300 ուրբուց ալեւելից զանձվում և	22 »	
Տնտեսութեան յեկամտի մնացորդի 300 ուրբուց վեր մինչև 400 ուրբուց ալեւելից զանձվում և	25 »	
Տնտեսութեան յեկամտի մնացորդի 400 ուրբուց վեր մինչև 600 ուրբուց ալեւելից զանձվում և	28 »	
Տնտեսութեան յեկամտի մնացորդի 600 ուրբուց վեր մինչև ցուկից զանձվում և	30 »	
30. Իաշնակից հանրապետութեաններին ժողովրդական կոմիտեների խորհուրդներին իրավունք և վերապահում ինքնավար		

Հանրապետութեան ժողովրդական կոմիտեների խորհուրդներին, յերկրային, մարդային, նահանգական և շրջանային գործադիր կոմիտեների միջնորդութեան նախագահներին, փոքրագույն հարկը վորոշիլի անտեսութեան յուրաքանչյուր շնչին ընկնող յեկամոր հարկման սկզբունքով կառուցված կոպարային աղյուսակով (таблица ставок):

Այս դեպքում համապատասխան վարչա-տերիտորիալ միավորի ամբողջ տարածութեան վրա ամեն մեկ անհատական, կամ կոյր-յեկամով անտեսութեան հարկի չափը վորոշվում է անտեսութեան յեկամոր և շնչերի թվի համեմատ, ընդ վորում՝

Յուրաքանչյուր
սուբյեկտ

Շնչին ընկնող առաջին 20 ո. յեկամորից դանձվում է . . .	2 կոպեկ
Շնչին 20 ո. վեր մինչև 30 ո. ընկնող յեկամոր ամբողջութեանց դանձվում է . . .	3 »
Շնչին 30 ո. վեր մինչև 40 ո. ընկնող յեկամոր ամբողջութեանց դանձվում է . . .	5 »
Շնչին 40 ո. վեր մինչև 50 ո. ընկնող յեկամոր ամբողջութեանց դանձվում է . . .	10 »
Շնչին 50 ո. վեր մինչև 60 ո. ընկնող յեկամոր ամբողջութեանց դանձվում է . . .	15 »
Շնչին 60 ո. վեր մինչև 70 ո. ընկնող յեկամոր ամբողջութեանց դանձվում է . . .	21 »
Շնչին 70 ո. վեր մինչև 80 ո. ընկնող յեկամոր ամբողջութեանց դանձվում է . . .	23 »
Շնչին 80 ո. վեր մինչև 100 ո. ընկնող յեկամոր ամբողջութեանց դանձվում է . . .	25 »
Շնչին 100 ո. վեր մինչև 140 ո. ընկնող յեկամոր ամբողջութեանց դանձվում է . . .	28 »
Շնչին 140 ո. ամբողջ ընկնող յեկամոր ամբողջութեանց դանձվում է . . .	30 »

11. Այն դեպքերում, յերբ հարկի չափը վորոշվում է 30-րդ հոդվածում ցույց տրված աղյուսակով, վորոշված հարկի գումարից զեղչվում է հետևյալ չափով.—

ա) մեկ շունչ անեցող անտեսութեան համար—հարկի գումարի 30 տոկոսը.

բ) յերկու շունչ անեցող անտեսութեան համար—հարկի գումարի 20 տոկոսը. իսկ յեթե այդ շնչերից թեկուր մեկը անաշխատունակ է,—հարկի գումարի 30 տոկոսը.

գ) յերեք շունչ անեցող անտեսութեան համար, յեթե նրանցից միայն մեկն է աշխատունակ, հարկի գումարի 10 տոկոսը:

Վորոտային և ույրանական հարկային հանձնաժողովներին իրավունք է վերապահվում չկիրառել այդ զեղչը, յեթե անտեսութեանն ունենոր է:

32. Ուղղրեկտանի Ս. Ս. Հ. և Թուրքմենիստանի Ս. Ս. Հ. յուրաքանչյուր անհատական անտեսութեան հարկի չափը վորոշվում է անտեսութեան յեկամոր ընդ հանուր գումարի համեմատ, ընդ վորում՝

Յուրաքանչյուր
սուբյեկտ

Տեսակութեան առաջին 100 ո. յեկամորից դանձվում է . . .	3 կոպեկ
Տեսակութեան յեկամոր 100 ո. վեր մինչև 200 ո. ամբողջութեանց դանձվում է . . .	6 »
Տեսակութեան յեկամոր 200 ո. վեր մինչև 300 ո. ամբողջութեանց դանձվում է . . .	13 »
Տեսակութեան յեկամոր 300 ո. վեր մինչև 400 ո. ամբողջութեանց դանձվում է . . .	17 »
Տեսակութեան յեկամոր 400 ո. վեր մինչև 500 ո. ամբողջութեանց դանձվում է . . .	20 »
Տեսակութեան յեկամոր 500 ո. վեր մինչև 600 ո. ամբողջութեանց դանձվում է . . .	23 »
Տեսակութեան յեկամոր 600 ո. վեր մինչև 700 ո. ամբողջութեանց դանձվում է . . .	27 »
Տեսակութեան յեկամոր 700 ո. վեր մինչև 800 ո. ամբողջութեանց դանձվում է . . .	28 »
Տեսակութեան յեկամոր 800 ո. վեր մինչև 900 ո. ամբողջութեանց դանձվում է . . .	29 »
Տեսակութեան յեկամոր 900 ո. վեր ամբողջութեանց դանձվում է . . .	30 »

Ծանոթութիւն.—Ուղղրեկտանի Ս. Ս. Հ. և Թուրքմենիստանի Ս. Ս. Հ. ժողովրդական կոմիտեների խորհուրդներին իրավունք է վերապահվում այդ հանրապետութեանների ամբողջ տերիտորիայի վրա, կամ առանձին շրջ-

Չանհերում սահմանելու, վերադասել հարկը վերջովի 20-րդ հոդվածում ցույց տրված կոպարային աղյուսակով:

33. Կոյլեկալով տնտեսությունների հարկի չափը տմենաբեք վերջովում և 30-րդ հոդվածում ցույց տրված կոպարներն աղյուսակով, կիրառելով համապատասխան գեղերում ներկա կանոնադրության 50-րդ և 51-րդ հոդվածներում թված գեղչերը:

Ծանոթություն.—Գյուղատնտեսական կոմունաների և արտելների, այլև առանց վարձու բանվորների՝ հասարակական ուժերով հողը մշակող ընկերությունների տնտեսության հասարակացված մասի համար, յեթև նրանց շնչին ընկնող հարկի յենթակա յեկամուտը ավելի բարձր և քան ավյալ գավառի (ռայոնի) գյուղացիական անհատական տնտեսությունների շնչին ընկնող միջին յեկամուտը, հարկը վերջովում և հիշված միջին յեկամուտի համեմատ:

34. Խ. Ս. Հ. Միության ամբողջ տերիտորիայի վրա խորհրդային տնտեսությունների (նրանց թվում և կցվածների) հարկի չափը վերջովում և համաձայն՝

ա) տնտեսության հարկի յենթակա յեկամուտի գումարի,
բ) ավյալ նահանգի կամ շրջանի հարկի յենթակա յեկամուտի մեկ ուրբու հարկի միջին կոպարի:

35. Միասնական գյուղատնտեսական հարկի յենթակա չեն այն անհատական տնտեսությունները, վորոնց հարկի յենթակա յեկամուտի գումարը չի գերազանցում՝ 1 և 2 չունչ ունեցող տնտեսությունների համար—100 ուրբուց 3 և 4 չունչ ունեցողների համար—120 ուրբուց, 5 և ավելի չունչ ունեցողների համար—130 ուրբուց:

Այն կոյլեկալով տնտեսությունները, վորոնց հարկման յենթակա շնչապատկան յեկամուտի գումարը չի գերազանցում 30 ուրբուց, չեն յենթարկվում միասնական գյուղատնտեսական հարկի:

Ծանոթություն.—Վոյոստային և ույոնական հարկային հանձնաժողովներին իրավունք և վերապահվում չկիրառել Հարկվող միևնույնն այն տնտեսությունների նկատմամբ, վորոնք պետական արհեստահարկի և յեկամտահարկի սրերների կարգով հարկման յենթակա յեկամուտներ ունեն:

36. Դաշնակից հանրապետությունների ժողովրդական կոմիտեների խորհուրդներին իրավունք և վերապահվում հանրապետության սահմանների մեջ մտնող նահանգների և շրջանների համար

վորիտել 35-րդ հոդվածում նշած Հարկվող միևնույնն այն հաշվով, վոր ամբողջ հանրապետության մեջ այդ հոդվածով հարկից ազատվող տնտեսությունների ընդհանուր թիվը չփոփոխվի:

37. Դաշնակից հանրապետությունների ժողովրդական կոմիտեներին խորհուրդներին իրավունք և վերապահվում նահանգների և շրջանների համար սահմանել ֆոնդեր՝ հարկից ազատելու համար այն սակավունակ տնտեսությունները, վորոնց յեկամուտի գումարը գերազանցում և ՀՀ հարկվող միևնույնն (35-րդ հոդվ.) : Դաշնակից հանրապետության սահմաններում կազմվող այդ ֆոնդերի ընդհանուր գումարը չպետք և գերազանցի Խ. Ս. Հ. Միության ժողովո՞րդի կողմից վերջովում այն չափից, վորը սահմանվում և տվյալ գաշնակից հանրապետությունից գանձվելիք հարկի գումարի նրկատմամբ տոկոսային հարաբերությամբ:

Այս հոդվածով նախատեսված ֆոնդերի գումարները նահանգական և շրջանային գործադիր կոմիտեները բաշխում են ըստ վոյոստների և ույոնների:

Ի հաշիվ այդ գումարների վոյոստային և ույոնական հարկային հանձնաժողովները տնտեսություններն աղատում են հարկից:

38. 35—37-րդ հոդվածների կարգով հարկից բոլորովին ազատվելիք տնտեսությունների թիվը պետք և կազմի Խ. Ս. Հ. Միության տնտեսությունների ընդհանուր թվի 35 տոկոսը:

ՀԱՏՎԱԾ IV

ՀԱՏՎԱՑՈՒՄՆԵՐ ՇՈՐՈՒՏ ՏԵՂԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ

39. Տեղական խորհուրդների միջոցներին փոխանցված ծախքերը ծածկելու համար յուրաքանչյուր գաշնակից հանրապետության սահմաններում ստացված միասնական գյուղատնտեսական հարկի ընդհանուր գումարից հատկացվում և 62 տոկոս:

40. Տեղական միջոցների սպախ 39-րդ հոդվածի կարգով կատարվող հատկացումները բաշխվում են հետևյալ կերպով.—

ա) յուրաքանչյուր վոյոստի կամ ույոնի սահմաններում գանձված հարկի 40 տոկոսը հատկացվում և տվյալ վոյոստի կամ ույոնի բյուջեին:

բ) նահանգական բաժանում չունեցող յուրաքանչյուր ինքնավար հանրապետության, յերկրի, մարզի և նահանգի, Անդրկովկասի Սոց. Դեմ. Խորհրդային հանրապետությունում՝ նաև ինք

նախարհապետութեան սահմանների մեջ չմտնող գաղափարներ, Ռեկրայնայի, Բեկորուսիայի, Ուգրեկստանի և Թուրքմենստանի Սոց. Խորհրդի հանրապետութիւններում—չըջանի սահմաններում գանձված հարկի 12 տոկոսը հատկացվում է տվյալ վարչա-տնտեսական միավորի բյուջեյին և կարող է ոգտագործվել ինչպես միջոցառումների, ռազմական և նրանց համապատասխանող բյուջեների ուժեղացման, նույնպես և մյուս տեղական բյուջեների յեկամատարեր սպրդարներն ուժեղացնելու համար:

դ) յուրաքանչյուր գաղափարի հանրապետութեան սահմաններում գանձված հարկի 10 տոկոսը տվյալ հանրապետութեան ժողովրդական կոմիտեների խորհրդի կողմից բաշխվում է «բ» կետում թված վարչա-տնտեսական միավորների բյուջեների միջև՝ նրանց տնտեսական և ֆինանսական գրութեան համեմատ:

41. Հարկի հաշիւին մուծվող գումարները բաշխվում են համապետական և տեղական բյուջեների միջև, համաձայն 39-րդ և 40-րդ հոդվածների, անորոշանաբար՝ նրանց գանձման համեմատ:

ՀԱՏՎԱԾ V

ՀԱՐԿԱՅԻՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

42. Մինչև Խ. Ս. Հ. Միութեան կառավարութեան հասուկ վարչում կայացնելը միասնական գյուղատնտեսական հարկից ստորեկ թված վարչերում ազատվում են բնակչութեան հետեյալ կատեգորիաները.—

ա) Բուրխատ—Մոնղոլիայի ինքնավար Ս. Խ. Հ.—ում՝

1) տունգուսները, որոշները և սոյոտները,

2) Բաունտովի և Հյուսիս—Բայկալյան ռազմային զորքերի բնակչութեան առանձին կատեգորիաները՝ Բուրխատ—Մոնղոլիայի Խ. Ս. Հ. ժողովրդական կոմիտեների խորհրդի վարչում:

բ) Յակուտիայի ինքնավար Սոց. Խորհրդի շահապետութեանում.—

1) տունգուսները, յամուսները, որոշները, յուկագիրները, չուվանները, ոմսկները և չուկչանները:

2) Յակուտիայի ինքնավար Սոց. Խորհրդի հանրապետութեան ժողովրդական կոմիտեների խորհրդի վարչում Բուրխատ—Սիլի, Վերխոյանսկի և Կարիմի չըջաններում բնակչութեան առանձին կատեգորիաները:

գ) հետավար արեւելյան յերկրում՝

1) զորքերը, որոշները, սամոգիրները, ուլները, մանկերը, սոյոտները, բիրարները, նեգիդաները (ամգուսները), որոշները, որոշները, գիւյականները, եվանկները, տունգուսները, չուկչանները, դաւրները, մանջուսները, չուվանները, կորյանները (կերկները), չուկչները, իտեմները (կամչագանները), կարաչները, ուլուսները, ալուսները, յամուսները, ուղեկները, թագերը և եսկիմոսական բոյոր ցեղերը:

2) Կամչատկայի և Սախալինի չըջանների, Նիկոլայի չըջանի, Տուգուր—Չումուկանի, Ուստուկի և Ուսկի ռազմային և Ամուրի չըջանի Ալեքսանդր—Բուրեյի ռազմի ամբողջ բնակչութեանը:

դ) Սիբիրյան յերկրում՝

1) սամոյեդները, սոսյակ—սամոյեդները, յուրականները, դոյուկանները (դոյուսներ), յենիսեյցիները, (կետ) կարագուսները, սոյոդները, տունգուսները, որոշները, ինչպես նաև անդրատունգուսյան հասարակութեանի որդաներին պատկանող քաղաքացիները:

2) յերկրային գործադիր կոմիտեի վարչում բնակչութեան առանձին կատեգորիաները:

ե) Ուրալի մարզում՝ վոդուները, սոսյակները, սամոյեդները, յուրականները և տունգուսները:

զ) Կոմի (գիրյաններ) ինքնավար մարզում՝

1) սամոյեդները,

2) մարզային գործադիր կոմիտեի վարչում բնակչութեան առանձին կատեգորիաները:

բ) Արխանգելսկի նահանգում 1) սամոյեդները, 2) Հյուսիսային Սաուցայ Ուկլանոսի կղզիների մշտական բնակչութեանը:

թ) Մուրմանի չըջանում՝ ամբողջ աշխատավոր բնակչութեանը

ժ) Դալստանի ինքնավար Սոց. Խորհրդի հանրապետութեանում՝ նոգայները:

ի) Տաճիկների ինքնավար Ս. Խ. Հ. Լենին—Բադախշանի ինքնավար մարզի բնակչութեանը:

43. Միասնական գյուղատնտեսական հարկից ազատվում են՝

ա) ամբողջովին պետական կամ տեղական բյուջեով պահույ իրաւական, փորձ—ցուցադրական, սեւեկցիան, սերմային և անասնորոժական կայանների տնտեսութեանների, ագրոպեկ կեն-

դանիների տնտեսութունների և ձիարուծարանների յեկամուտները .

բ) գյուղատնտեսական գիտական և ուսումնական հաստատությունների փորձնական և փորձա-ցուցադրական տնտեսութունների յեկամուտները .

գ) գալորցիների, մանկական հիմնարկների, արգելադրողների (վորոնց թվում և ազատությունից զրկվածների աշխատանքային դադարեցում), ինչպես նաև պետական, հասարակական և պրոֆեսիոնալ հիմնարկութունների ու կազմակերպութունների հաշվին պահվող բժշկական հաստատությունների տնտեսութունների յեկամուտները .

դ) գիտական-ցուցադրական նշանակութուն ունեցող կամ յուսալիրության ժողովրդական կոմիտեիատների մարմինների կուլտուր-լուսավորական հաստատությունների պարենաօրոմանը ծառայող հասարակական ցանքերի յեկամուտները .

ե) վոլոստի և ռայոնական ֆոնդերից զատված և գյուղատնտեսական փոխադարձ ոգնության ընկերությունների և նրանց համապատասխանող կազմակերպությունների կողմից իրենց նպատակներին համար ոգտագործվող հողամասերի վրա կատարված հասարակական ցանքերի յեկամուտները .

զ) գյուղական համայնքների համախոսականով համայնական ֆոնդից զատված հողամասի վրա՝ անձեռնմխելի սերմի պաշար կազմելու նպատակով հասարակության հաշվին կազմակերպված ցանքերի յեկամուտները .

ը) համայնական ֆոնդից կամ պետական հողային դույլից համայնական զուգալիրման նպատակներով ոգտագործվող արապորդներին համար հատկացվող խոտհարքների յեկամուտը՝ յուրաքանչյուրին 3 գեոյատինի սահմաններում .

թ) կամավոր հրդեհաշիջ կազմակերպությունների շաաաոգ սահմանված ձիերի կազմի կեր մթերելու համար զատված հողամասերի յեկամուտները, այլև նույն կազմակերպությունների ձիերից ստացվող յեկամուտը—կայուն շտատներին սահմաններում .

ժ) կենդանաբուծական տնտեսությունների յեկամուտները՝ ոչ ոչ տնտեսություններին հողամասեր հատկացնելու որմանից ստացված յերեք տարվա ընթացքում :

44. 43-րդ հոդվածի կարգով հարկից ազատվող տնտեսությունների և հողերի ցուցակները կազմվում են դաշնակից հանրապետությունների որենսդրությամբ սահմանվող կարգով :

45. Դաշտամշակության և գյուղատնտեսության հատուկ ճյուղերի յեկամուտները հարկի յենթարկելիս չեն հարկվում՝

ա) վոչ պիտանի հողերը, նրանց մեկտրացիայի յենթարկելու դեպքում, ինչպես նաև արհեստական վոուգման յենթարկված և պատնելված այն հողերը, վորոնք առաջ հարկման յենթակա տարածության մեջ չեյին մտնում, —նրանց վրա՝ հողոգտագործողների միջոցներով կատարվող մեկտրասիվ աշխատանքներն ավարտելուց հետո յերեք տարվա ընթացքում .

բ) այն տարածությունները, վորոնց վրա հարկման նախընթաց տարում համահասած անտառամասերի կոճղահանություն և կատարվել ցանքի և խոտհարքի համար .

գ) նորատունկ խաղողի այգիները և պտղատու ծառատանները —պտղաբերությունը սկսելուց հետո մինչև յերկրորդ տարին .

դ) ֆիլոկսերայի դիմացող պտղատառակայների վրա անկվող խաղողի այգիները, պտղաբերությունը սկսելուց հետո մինչև յերրորդ տարին .

ե) պտղատու ծառերի և խաղողի նոր տնկարանները տնկելու պահից սկսած 4 տարվա ընթացքում .

զ) բամբակի սերմափոխության մեջ մտնող՝ առվույտ (յոնջա) ցանված տարածությունները—ցանելու պահից սկսած առաջին տարվա ընթացքում .

ը) գնդածաղկի (վորսյանկա) ցանքերը—ցանելու պահից սկսած առաջին հինգ տարվա ընթացքում .

թ) ցանովի խոտերի սերմաբուծարանները .

յ) գենադերչակի ցանքերը .

ի) կենաֆի ցանքերը .

լ) գյուղական տնտեսություններին հատկացրած այն լրացուցիչ հողաբաժինները, վորոնք տրամադրված են՝ մանկատների անկերին գյուղատնտեսական աշխատանքների սլաաբատելու համար՝ հատկացնելու որից յերեք տարի ժամանակամիջոցում :

Ծանոթություն.—Ա. Ս. Ֆ. Խ. Շ. և Ուրբ. Ս. Խ. Շ. ժողովրդական կոմիտեներին խորհուրդներին իրավունք և վերապահվում հարկի չենթարկելու թեյի տնկարանները և թթենու ծառատանները :

46. Վուչի և բամբակի ցանքերի տարածությունը ընդարձակման նպատակով, վուչի և բամբակի ցանքերի մեկ գեոյատինի յեկամաս-բերութեան նորմաները սահմանվում են հացահատիկային մշակութիւնների բռնած մեկ գեոյատին հողի (վարելահողի կամ ցանքի) համար տվյալ վարչա-տերիտորիալ միավորի սահմաններում վորոշ-ված յեկամասի նորմաների կիսի չափով:

Այն շրջանների ցանկը, վորոնց վրա տարածվում է մատ-նանշված հարկային արտոնութեանը, վուչի նկատմամբ—կադ-մրվում է խ. Ս. Հ. Միութեան ֆինանսների ժողովրդական կոմի-տարխատի, խ. Ս. Հ. Միութեան ներքին և արտաքին Առևտրի Ժո-ղովրդական կոմիտարխատի և Ռ. Ս. Ս. Ֆ. Հ. ու Բելորուսիայի խ. Ս. Հանրապետութեան Հողագործութեան ժողովրդական կո-միտարխատիների համաձայնութեամբ:

47. Անտեսներին յեկամասների հարկը սահմանելիս հարկման չեն յենթարկվում՝

ա) հողային մարմինների հավանութեանը պատճ ցուրեր և հավատակները:

բ) ցեղական բուծարանների բոլոր տեսակի—ներառաւ, կիսա-կոչտարուրդ և կոչտարուրդ փոխարները:

գ) հողային մարմիններում տոմարադրված՝ բեղմնավորման հետարակական կայաններում գտնվող ագնիացեղ փարաղները:

դ) մերինոս և կիսամերինոս վոչխարները:

48. Չխաբուծական ընկերութեաններին, խմբական տնտեսու-թեաններին և անհատական տնտեսութեաններին, վորոնք դաշ-նակից հանրապետութեանների հողագործութեան ժողովմասների հետ կնքած տիպիկ պայմանագրերով իրենց հատկացրած հողա-մասի վրա յերամներով ոսպմական նորոգրնարի հեծկան ձիեր են տնկեցնում, միասնական գյուղատնտեսական հարկի նկատմամբ արվում են տուածին 4 տարվա ընթացքում հետեյալ արտոնութեան-ները:—

ա) հարկից ազատվում են հողային մարմինների մատյաններում տոմարադրված ագնիացեղ կազմ ունեցող յերամակները, ինչպես նաև ոսպմական վարչութեաններին արվող կամ արտադրողների յերամակներում թողնվող աճի յեկամուտը:

բ) հարկից ազատվում են ամեն մի ձիու համար (զամբիկ, հո-վատակ և մեկ տարուց մեծ մատղաշ) 3-ական գեոյատինի չափով խոտհարքի և արտատեղի յեկամուտները:

49. Հողաչինարարութեան և դաղթի կանտների կարգով տե-ղափոխվող և վերարնակվող աշխատավոր հողագտադործողների և նրանց միութեանների (արտելներ, կոմունաներ, ընկերութեաններ) տնտեսութեաններին միասնական գյուղատնտեսական հարկի տա-պարիցում արվում են հետեյալ արտոնութեանները:—

ա) այն տնտեսութեանները, վորոնք դաղթել և վերարնակվել են աշխատի վայրերում, վորտեղ տնտեսութեան կազմակերպելու համար հողագործներէց պահանջվում է կոնզահանութեան և ալլ մեյիորատով աշխատանքների միջոցով մշակելի հողեր պատրաստել, ազատվում են հարկից տեղափոխման ժամանակից սկսած առաջին հինգ տարվա, իսկ կոլլեկտիվ տնտեսութեանները՝ վեց տարվա ընթացքում:

բ) այն տնտեսութեանները, վորոնք դաղթել և վերարնակվել են աշխատի վայրերում, վորտեղ տնտեսութեան կազմակերպելու հա-մար պահանջվում է խամ հողերը մշակել, ազատվում են հարկից, տեղափոխման ժամանակից սկսած առաջին յերք տարվա, իսկ կոլ-լեկտիվ տնտեսութեանները՝ չորս տարվա ընթացքում:

գ) այն տնտեսութեանները, վորոնք դաղթել և վերարնակվել են աշխատի վայրերում, վորտեղ չի պահանջվում խամ հողերը մշա-կել, բայց հողաչինարարութեան կարգով հատկացված հողամասի վրա մշտական տնտեսութեան վարելու համար անհրաժեշտ է կա-ուուցել համապատասխան շենքեր, ազատվում են հարկից նոր սահ-մաններում հողագտադործութեանը սկսելուց հետո մեկ տարվա ընթացքում, իսկ կոլլեկտիվ տնտեսութեանները շենքերը տեղա-փոխելու դեպքում—յերկու տարվա և նոր շենքեր կաուուցելու դեպ-քում՝ յերք տարվա ընթացքում:

Մանրութեան 1.—Գաղթականների և վերարնակիչների համար այս հողվածով սահմանված արտոնութեանները տա-րածվում են նաև այն ներգաղթողների ու արտագաղթողների վրա, վորոնք աշխատում են գյուղատնտեսութեան ասպարի-ցում և նստակյաց աշխատավորական կյանքի անցնող զնշու-ների վրա այն դեպքում, յերք նրանց հող և հատկացվում գյուղական վայրերում:

Մանրութեան 2.—Ուղբեկստանի և Թուրքմենստանի խ. Ս. և Կիրգիզիայի ինքնավար խ. Ս. հանրապետութեան-ներում հողային բարենորոգումների կարգով հող և անա-

տուններ ստացած չքավոր տնտեսությունների համար 1928-29 թվի հարկի չափը իջեցվում է՝

ա) նոր կազմված տնտեսությունների համար Ուղբեկ-
լստանի և Թուրքմենստ. ի.Ս.Ղ., Նախկին Սամարկանդի,
Տաշկենտի և Ֆերգանի մարզերի տերիտորիայի վրա—33 1/2
տոկ., իսկ Ուղբեկստ. ի.Ս.Ղ. Նախկին Ջերավչանի մարզի
և Կիրգիզիայի Ինքնավար ի.Ս. Ղ. տերիտորիայի վրա—75
տոկոսով. բ) Ուղբեկստ. ի.Ս.Ղ. Նախկին Ջերավչանի մարզի
տերիտորիայի վրա բնակման և շինություններ ունեցած
տնտեսությունների համար—25 տոկոսով, իսկ Կիրգիզիայի
և Ս.Ղ. ուսում ունեցածների համար—50 տոկոսով: Ուղբեկստանի
և ի.Ս. Ղ. Նախկին Անդիթանի գավառի նախկին Այիմի վոյսո-
տում հողային բարենորոգումների կարգով հող և անասուն
ստացած տնտեսություններն ազատվում են 1928-29 թվի
միասնական գյուղատնտեսական հարկից:

Ծանոթություն 3.—Սախարին կղզու հիմնական բնակիչ-
ների թվին չպատկանող և պլանային կարգով այդ կղզու հո-
ղագործիկան շրջաններում տեղավորվող գաղթականներն ու
նրանց միություններն ազատվում են միասնական գյուղա-
տնտեսական հարկից՝ նախապես բնակելի յեղած հողաբա-
ժիններում տեղավորվելու դեպքում՝ 10 տարվա ընթացքում,
իսկ անբնակ հողամասերում տեղավորվելու դեպքում՝ 15
տարվա ընթացքում:

50. Գյուղատնտեսական կոմունաների և արտելների համար,
վորոնց հարկի յենթակա շնչապատկան յեկամուտը ավյալ դավառի
(կամ համապատասխան վարչա-տերիտորիալ միավորի) կամ շրջա-
նի գյուղացիական անհատական տնտեսությունների շնչապատկան
միջին յեկամտից ավելի չէ, հարկի գումարը զեղչվում է հետևյալ
չափով՝

գյուղատնտեսական կոմունաներից—60 տոկոս,

գյուղատնտեսական արտելներից—40 տոկոս:

Գյուղատնտեսական կոմունաների և արտելների համար, վո-
րոնց շնչապատկան յեկամուտը բարձր է գավառի (ուսյունի) գյու-
ղացիական անհատական տնտեսությունների շնչապատկան միջին
յեկամտից՝ հարկը հաշվվում է ըստ մատնանշված միջին յեկամտի
և այս ձևով հաշված հարկի գումարից զեղչվում է՝

գյուղատնտեսական կոմունաների համար—30 տոկոս

գյուղատնտեսական արտելների համար—25 տոկոս:

51. Առանց վարձու բանվորների, հասարակության ուժեքով
հողը մշակող ընկերությունների տնտեսության հասարակայնացված
մասից զեղչվում է հարկի գումարի 20 տոկոսը:

52. Այն տնտեսություններին, վորոնց կազմի մեջ մտնում են՝

ա) շաբաթյին և կրտսեր հրամանատարական կազմի զինվորական
ծառայողներ, վորոնք գտնվում են բանվորա-գյուղացիական կար-
միր բանակի բնակազմի մշտական ծառայության մեջ, հաշվելով
նաև հարկման տարվա աշնանը զորակոչվածներին, և բնակազմի
մեջ գտնվող հրամանատարական կազմի (հրամանատարական,
վարչական, քաղաքական, բժշկական և անասնաբուժական) ալ
ծառայողներ (վորոնց թվում նաև Պետական Գաղաքական Վարչու-
թյան զորամասերի և պահակախմբերի), ինչպես նաև բանվորա-
գյուղացիական կարմիր Բանակի պահեստում (резерв) գտնվող՝
հրամանատարական կազմին պատկանող անձինք.

բ) նախազինակոչային կամ արտազորային պարապմունքները և
վարչական հավաքները զեկավարելու համար վորպես հրահանգիչ-
ներ կանչված տերիտորիալ (յերկրային) մասերի վոյսոխական
կազմում, յերկարատե արձակուրդում և բանվորա-գյուղացիական
կարմիր բանակի պահեստում գտնվող հրամանատարական կազմի
անձինք.

գ) հարկման նախընթաց տարվա մարտի 1-ից հետո յերկարատե
արձակուրդ ստացած, պահեստի մեջ հաշվվող կամ ծառայությու-
նից բոլորովին արձակված «ա» կետում հիշված անձինք.

դ) պատերազմի հաշմանդամները և հաշմանդամության առա-
ջին, յերկրորդ և յերրորդ աստիճանի պատկանող, անաչխատ յեկա-
մուտներ չունեցող աշխատանքի հաշմանդամները,

հարկի նկատմամբ տրվում են հետևյալ արտոնությունները.—

	Յեթե տնտեսութեան հարկման յենթարկվող յեկամուտը չի գերազանցում 190 ու, իսկ 4 և ավելի շունչ ունեցող տնտեսութեաններում չի գերազանցում 65 ու յուրաքանչյուր շնչին	Յեթե տնտեսութեան հարկման յենթարկվող յեկամուտը 190 ու ավելի չի, իսկ 4 և ավելի շունչ ունեցող տնտեսութեաններում գերազանցում է 65 ու յուրաքանչյուր շնչին
ա) Տնտեսութեաններ, վորոնց կազմի մեջ են մտնում գերակետիկ ծառայութեան կրտսեր հրամանատարական կազմին պատկանող անձինք, յեթե տրնտեսութեան մեջ չկան ուրիշ աշխատունակ տղամարդիկ	Բոլորովին ազատվում են հարկից	Ազատվում են հարկի չերեք քառորդից
Յեթե տնտեսութեան մեջ կան ուրիշ աշխատունակ տղամարդիկ	Բոլորովին ազատվում են հարկից	Ազատվում են հարկի կեսից
բ) Տնտեսութեաններ, վորոնց կազմի մեջ մտնում են այս հոգվածում հիշված մյուս անձինք, յեթե տնտեսութեան մեջ չկան ուրիշ աշխատունակ տղամարդիկ	Ազատվում են հարկի չերեք քառորդից	Ազատվում են հարկի կեսից
Յեթե տնտեսութեան մեջ կան ուրիշ աշխատունակ տղամարդիկ	Ազատվում են հարկի չերեք քառորդից	Ազատվում են հարկի մեկ քառորդից

Ծանոթութեան.—52-րդ հոգվածում մատնանշված անձինք մտնում են տնտեսութեան շնչերի ընդհանուր թվի մեջ:

Ծանոթութեան 2.—Իր կազմի մեջ 52-րդ հոգվածում թված անձինք ունեցող՝ կոլլեկտիվ տնտեսութեաններին հարկման յենթակա յեկամտի ընդհանուր գումարից դուրս

և հանվում հիշված անձանց վրա ընկնող յեկամուտների գումարը:

53. Այն տնտեսութեաններում, վորոնց մեջ մտնում են յերկրային հեծյալ մասերի փոփոխական կազմին պատկանող անձինք, վորոնք կանչված են ուսուցման և վարժական համաքների՝ սեփական չարային ձևերով, այդ ձևերի յեկամուտը հարկի չի յենթարկվում:

54. Այն տնտեսութեանները, վորոնց կազմի մեջ են մտնում ուսուցման և համաքների համար կանչված՝ տեղիտուրյալ մասերի փոփոխական կազմին պատկանող անձինք, միասնական գյուղհարկը կարող են վճարել իրենց վերադառնալու մոմենտից մեկ տմիս հետո, և այդ ժամանակի համար տույժ չեն վճարում:

55. Բ. Գ. Կ. Բ. ընտկազմից յերկարատե արձակուրդ ստացած, պահեստի կամ բոլորովին ծառայութեանից ազատված անձնավորութեանների կազմակերպված կոլլեկտիվ տնտեսութեանները բոլորովին ազատվում են միասնական գյուղհարկից ստորե թված բոլոր պայմանների դոյութեան գեպքում.—

ա) յեթե կոլլեկտիվի կազմակերպութեան ժամանակից անցել է վոշ ամելի քան 2 տարի:

բ) յեթե կոլլեկտիվը կազմակերպված է այդ անձնավորութեանների՝ Բ. Գ. Կարմիր Բանակից ազատվելու առաջին տարում:

գ) յեթե այդ անձանց թիվը կոլլեկտիվի աշխատունակ անդամների ընդհանուր թվի կիսից պակաս չէ:

56. 52-55-րդ հոգվածների համաձայն արտոնութեաններ վալլելող տնտեսութեանները այս կանոնադրութեան մյուս հոգվածներով նախատեսված արտոնութեաններից ոգտվելու իրավունքից չեն զրկվում:

57. Իրենց ծառայութեան պարտականութեանները կատարելիս, կամ դրա հետ կաող ունեցած գեպքերում սղանված անտառային պաշտոնյաների ալրիններին և անչափահաս զավակներին պատկանող աշխատավորական գյուղական տնտեսութեանները հիշյալ պաշտոնյայի մահից հետո հինգ տարվա ընթացքում ազատվում են միասնական գյուղատնտեսական հարկից:

58. Միասնական գյուղհարկի չի յենթարկվում վոսկի և լուսնոսկի (պլատինա) գտնելու դրադմունքի յեկամուտը:

59. Տարերային աղետներից տուժած տնտեսութայինները հարկից լրիվ կամ մասամբ ազատվում են փոխտուային և ուսյոնական հարկային հանձնաժողովների կողմից, համաձայն տնտեսութային կրած ընդհանուր փնտսի չափի և տնտեսութային կարողությունների:

ՀԱՏՎԱԾ VI

ՀԱՐԿ ՎՃԱՐԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՍԻՋՈՑՆԵՐԸ

60. Դաշնակից հանրապետությունների համար հարկի վճարման հետևյալ վերջնական ժամանակամիջոցներ են նշանակվում՝ ընդհանուր գումարի նկատմամբ տոկոսային հարարերությունները:

Պետք է գանձվի հանրապետության հարկի ընդհանուր գումարի տոկոսը:

Դաշնակից հանրապետություններ

Առ 1-ն Առ 1-ն Առ 1-ն Առ 15-ն Առ 1-ն
Հոկտեմբ. Դեկտեմբ. Հունվարի Հունիս. Փետրվ.

Ռ. Ս. Ֆ. Խ. Հ.	30	35	—	—	35
Ուկր. Ս. Խ. Հ.	35	45	—	20	—
Բ. Ս. Խ. Հ.	10	—	60	—	30
Ա. Ս. Ֆ. Խ. Հ.	15	35	—	—	50
Ուկր. Ս. Խ. Հ.	20	50	30	—	—
Թուրք. Ս. Խ. Հ.	40	40	20	—	—

61. Դաշնակից հանրապետությունների ժողովրդական կոմիտեների խորհուրդները փորձում են նահանգի և շրջանի համար հարկը վճարելու ժամանակամիջոցները, իսկ նահանգական և շրջանային դործադիր կոմիտեները, դավառական (կամ նրանց համապատասխանող) և ուսյոնական դործադիր կոմիտեների հետ համաձայնությունից հետո, ժամանակամիջոց են նշանակում փոխտու և ուսյոնի համար:

Այս հոդվածում թված մարմիններն այդ ժամանակամիջոցները նշանակում են այն հաշվով, փորձադիր վերադաս մարմինների կողմից սահմանված ժամանակամիջոցում լուրջաբանչյուր վարչատերիտորիալ միավորից ստացվի առնվազն այնքան հարկ, վերջինից ժամանակամիջոցում պետք է գանձվեր:

Ծանոթություն 1.—Կազակատանի ինքնավար Ս. Խ. Հ. և Ռ. Ս. Ֆ. Խ. Հ. յերկրների (մարզերի) համար հարկի վճարման ժամանակամիջոցները սահմանում է Ռ. Ս. Ֆ. Խ.

Հ. Ժողովրդական կոմիտեների խորհուրդը, իսկ նրանց կազմի մեջ մտնող նահանգների և շրջանների համար—Կազակատանի ինքնավար Ս. Խ. Հ. Ժողովուրդները, յերկրային և մարզային դործադիր կոմիտեներն ըստ պատկանելու:

Ծանոթություն 2.—Դաշնակից հանրապետությունների ժող. կոմ. Խորհուրդներին, կամ նրանց հանձնարարությունները՝ ինքնավար հանրապետությունների ժող. կոմ. Խորհուրդներին, յերկրային, մարզային, նահանգական և շրջանային դործադիր կոմիտեներին իրավունք է վերադասվում՝ տնտեսությունների առանձին խմբակների համար հարկի վճարման ավելի կարճ ժամանակամիջոցներ սահմանելու:

62. Վոյսոսների և շրջանների համար 61-րդ հոդվածի կարգով սահմանված ժամանակամիջոցները պարտադիր կերպով հրապարակվում են ի գիտություն հանրության հարկային տարվա մասին 25-ից փոքր ուշ, հայտարարվում են գյուղական համայնքի ժողովներում, մտցվում են հարկաթերթերի մեջ և հարկման ամբողջ տարվա ընթացքում փոշ մի փոփոխման չեն յենթարկվում:

ՀԱՏՎԱԾ VII

ՀԱՐԿԸ ԳԱՆՁՈՂ ՍԱՐՄԻՆՆԵՐԸ, ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՈՒ ԳԱՆԳԱՏՆԵՐ ՏՄԼՈՒ ՅԵՎ ՆՐԱՆՑ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

63. Դաշնակից հանրապետությունների որևէպետությունը սահմանում է, թե տեղական վարձարմինների վրա յե գրվում հարկի կիրարկության, մասնավորապես՝ հարկատուների ցուցակները կազմելու, յեկամտի աղբյուրների հաշվառման, հարկման յենթարկվող յեկամտի և հարկի գումարը հաշվելու, հարկաթերթեր կազմելու ու հաճնելու և հարկի վճարումներն ընդունելու պարտականությունները: Դաշնակից հանրապետությունների որևէպետությունը սահմանում է նաև հարկային հանձնաժողովների սխեման, կազմը, իրավունքները և պարտականությունները:

64. Միասնական գյուղատնտեսական հարկի վերաբերյալ՝ անհատական և կոլլեկտիվ տնտեսությունների բոլոր միջնորդություններն ու դանդառները տրվում են վոյսոսների և ուսյոնների դործադիր կոմիտեներին, փորձք պարտավոր են այդ միջնորդություններն ու դանդառները անմիջապես հանձնել ուսյոնական և փոխտուային հարկային հանձնաժողովներին ի քննություն: Վեր-

ջինների վորոշումների դեմ կարելի չե գանդատ տալ անմիջական վերադատ հարկային հանձնաժողովներին, վորոնց վորոշումները վերջնական են:

Հարկային հանձնաժողովները պարտավոր են ստացված միջնորդութուններն ու գանդատները քննել ստանալու օրից հետո մեկ ամսվա ընթացքում:

65. Միջնորդութուններ և գանդատներ տալու համար սահմանվում են հետևյալ ժամանակամիջոցները. —

ա) յեկամտի ազդյուրները և ջնչերի թիվը սխալ հաշվառման յենթարկելու, յեկամտի գումարները և հարկի չափը սխալ հաշվելու վերաբարյալ գանդատները, այլև արտոնություններ տալու մասին հարուցվող միջնորդությունները, բացի տարերային աղետների առթիվ հարուցվող միջնորդություններից (այս հոդվածի «բ» կետը), պետք է տրվեն վոչ ուշ քան հարկաթերթը վճարողին հանձնելու օրից հետո մեկ ամսվա ընթացքում:

բ) տարերային աղետների հետևանքով արտոնություններ ստանալու մասին միջնորդությունները տրվում են աղետից հետո մեկ ամսվա ընթացքում:

66. Միջնորդություն հարուցելը և գանդատ տալը չի կասեցնում հարկի գանձումը:

67. Ռայոնական և վոյստային գործադիր կոմիտեների և հարկային հանձնաժողովների՝ ներկա կանոնադրությամբ նախատեսված պարտականությունները զաշնակից հանրապետությունների օրենսդրության կարգով կարող են զրվել տեղական այլ մարմինների վրա:

ՀԱՏՎԱԾ VIII

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

68. Յուրաքանչյուր անտեսության հարկի յենթակա յեկամտի ազդյուրները և ջնչերի թիվը ճիշտ և ժամանակին հաշվառման յենթարկելու, հարկման յեկամուտը և հարկի չափը ճիշտ և ժամանակին հաշվելու, հարկաթերթերը ժամանակին հանձնելու, ինչպես նաև հարկը ժամանակին և լրիվ գանձելու պատասխանատվությունը զրվում է վոյստային և ռայոնական գործադիր կոմիտեների, զյուղական խորհուրդների և նրանց համապատասխան մարմինների վրա:

69. Հարկը գանձող մարմիններից (հատված VIII-րդ) հարկման օբյեկտները թաղցնելու համար հարկատուները պատասխանատվության են յենթարկվում վարչական կամ քրեական կարգով:

Իրեն վարչական պատիժ, վոյստային և ռայոնական գործադիր կոմիտեները նշանակում են տուգանքներ՝ նոր հայտարարված յեկամտից հանող հարկի գումարի տասնապատիկից վոչ ավելի չափով:

Վոյստային և ռայոնական գործադիր կոմիտեների՝ տուգանելու վերաբերյալ վորոշումների դեմ կարելի չե գանդատ տալ չբրջնային, գավառային և նրանց համապատասխանող գործադիր կոմիտեներին: Սրանց վորոշումները վերջնական են:

70. 61-րդ և 62-րդ հոդվածների կարգով սահմանված և հրապարակված ժամանակամիջոցներում հարկը չվճարող հարկատուների նկատմամբ կիրարկվում են հարկերի գանձման կանոնադրությամբ նախատեսված միջոցները:

ՀԱՏՎԱԾ IX .

ՀԱՐԿԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

71. Դաշնակից հանրապետությունների օրենսդրական մարմինների բոլոր վորոշումները, վորոնք նախատեսված են 4-րդ, 10-րդ, 13-րդ հոդվածներով, 17-րդ և 19-րդ հոդվածների ծանոթություններով, 20-րդ, 21-րդ, 23-րդ հոդվածներով, 25-րդ հոդվածի «բ» կետով, 27-րդ, 30-րդ հոդվածներով, 32-րդ հոդվածի ծանոթությամբ, 36-րդ, 37-րդ, 63-րդ և 67-րդ հոդվածներով, պետք է հրապարակվեն վոչ ուշ քան մինչև հարկման տարվա մասին 25-ը:

72. Այս կանոնադրության կիրարկման վերաբերյալ հրահանգներ և կանոններ հրապարակումը հանձնարարվում է Ս. Ս. Հ. Միության ֆինանսների ժողովրդական կոմիտեի անունով:

Ս. Ս. Հ. Միության կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահ՝ Մ. ԿԱՆԻՆԻՆ
Ս. Ս. Հ. Միության կենտրոնական գործադիր կոմիտեի ֆարուղորդ՝ Ս. ՅԵՆՈՒԿԻՆԵ

Մոսկվա, Կրեմլ, 1928 թ. ապրիլի 21-ին.

ՀԱՅԳՈՒԼԻԳՐԱՅԻ I ՏՊԱԲԱՆ
ՊԱՏՎԵՐ 3304
ԳՐԱՌԵՊ. 794 Բ. ՏԻՐԱԺ 1800.



22X15

1998p.

11
56663

7 2- 3600